ԱԳՐՈ Լրատու

ՕԳՈՍՏՈՍ 25-ՍԵՊՏԵՄԲԵՐ 5 2015 Թ. ԹԻՎ 22 (2077)

ՏԱՍՆՕՐՅԱ ԹԵՐԹ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1951 Թ. ԳԻՆԸ՝ 120 ԴՐԱՄ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑ

Շահագործման է հանձնվել հանրապետության ամենախոշոր սպանդանոցը

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն Արարատի մարզի Մասիս համայնքում մասնակցել է հայ-իրանական համատեղ «Ոսկե կացին» ընկերության կողմից հիմնադրված սպանդանոցի բացման արարողությանը: Միջոցառմանը ներկա էին ՀՀ-ում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան պարոն Մոհամմադ Ռեիսին, Արարատի մարզպետ Ռուբիկ Աբրահամյանը, այլ հյուրեր և պաշտոնատար անձինք:

Սպանդանոցը զբաղեցնում է 2400 մ^2 տարածք և ունի բոլոր անհրաժեշտ սառնարանային սարքավորումները՝ մսի պահպանությունը իրականացնելու համար: Այն մեկ հերթափոխում կարող է մորթի ենթարկել 1000 գլուխ մանր եղջերավոր և մինչև 200 գլուխ խոշոր եղջերավոր կենդանիներ:

Ողջունելով հյուրերին՝ նախարար Սերգո Կարապետյանն ընդգծել է սպանդանոցի կառուցման կարևորությունը՝ Հայաստանում անասնապահության ոլորտի զարգացման համար: «Շահագործման է հանձնվել հանարապետությունում ամենախոշոր սպանդանոցը. արդյունքում հնարավոր կդառնա մեծացնել դեպի հարևան երկիր՝ հատկապես ոչխարի մսի արտահանման ծավալները, ինչը կնպաստի մեր երկրում անասնապահության ոլորտի զարգացմանը», - նշել է նախարար Սերգո Կարապետյանը:

Նախարարը նաև հավելել է, որ սպանդանոցում մորթն իրականացվելու է մուսուլմանական «հալալ» կանոնների համաձայն, ինչը մեծապես կնպաստի դեպի մուսուլմանական երկրներ ոչխարի մսի արտահանման խնդրի լուծմանը: Նախարարն իր խոսքում կարևորել է նաև խելամիտ գնի սահմանման անհրաժեշտությունը, որը երկուստեք շահավետ կլինի:

2

Գյուղատնտեսական նշանակության նոր տարածքներ

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն աշխատանքային այցով մեկնել է Կոտայքի մարզի պտղատու այգիներ և հետևել է նորակառույց ջերմոցային տնտեսությունում իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքին:

Նախարարը, մարզպետ Կարապետ Գուլոյանի ուղեկցությամբ, նախ մեկնել է Ալափարս համայնք, որտեղ եղել է Սերգեյ Գրիգորյանի կողմից 5 հեկտարի վրա հիմնված ազնվամորու այգում, որից 2 հեկտարը մշակվում է ՀՀ գյուղատնտեսության նախարարության գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակի աջակցությամբ: Ընկերության տնօրենի խոսքով՝ այգում մեկ հեկտարի բերքատվությունը կազմում է 4-5 տոննա բերք, արտադրանքն իրացվում է հիմնականում «Թամարա ֆրուտ» ընկերության կողմից, ինչպես նաև ներքին շուկայում: Նախարարն իր հերթին նպատակահարմար է համարել հնարավորության դեպքում տեղում կազմակերպել նաև պատրաստի արտադրանքի փաթեթավորման գործընթացը, իսկ կարկտահարություններից խուսափելու համար տեղադրել հակակարկտային ցանցեր:

Այնուհետև նախարարն այցելել է Նոր Գեղի համայնքի 20 հեկտարի վրա հիմնված խնձորի այգիներ, որոնց մշակումն իրականացվում է 5 սեփականատերերի կողմից ստեղծված կոոպերատիվի կողմից: Կոոպերատիվի անդամ Սաշա Հովհաննիսյանը տեղեկացրել է, որ այգում մշակվում է յոթ սորտի խնձոր. սեպտեմբերի վերջին կսկսվի բերքահավաքը, արտադրանքն իրացվում է հանարապետությունում և ռուսական շուկայում:

Նախարարը Նոր Գեղի համայնքում եղել է 3.2 հեկտարի վրա կառուցվող ելակի արտադրության ջերմոցային տնտեսությունում: Կենսատեխնոլոգ Արամ Ղևոնդյանի տեղեկացմամբ, ելակի սածիլներն օրերս կներկրվեն Հոլանդիայից, ելակի աճեցումը կատարվելու է անհող աճեցման ժամանակակից եղանակով: Այստեղ արտադրվող ելակի իրացումը նախատեսվում է կազմակերպել ինչպես ներքին շուկայում, այնպես էլ արտերկրում:

2

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Կառավարության նիստում վարչապետը դիմել է ներկաներին. «Ազգային վիճակագրական ծառայությունն այսօր հրապարակել է առաջին կիսամյակի տնտեսական աճի ցուցանիշերը: Առաջին եռամսյակում, ըստ ճշգրտված տվյալների, ունեցել ենք ՀՆԱ-ի 2,5 տոկոս, իսկ երկրորդ եռամսյակում 5,1 տոկոս տնտեսական աճ, արդյունքում ունենք շուրջ 4 տոկոս կիսամյակային տնտեսական աճ: Արտերկրից եկող տրանսֆերտների էական նվազման պարագայում հատկապես կարևորվում է գյուղատնտեսական ոլորտում արձանագրված աճը, որը լրջորեն մեղմում է արտաքին գործոններով պայմանավորված մեր քաղաքացիների գնողունակության կորուստը, ինչպես նաև մեր արտահանման բազմազանությունը: Մենք այսօր ապրանք ենք արտահանում ավելի շատ երկրներ: Հանձնարարում եմ տնտեսության ոլորտի բոլոր գերատեսչություններին՝ հանրությանը մանրամասն ներկայացնել կիսամյակի տնտեսական արդյունքները»:

ՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կարկուտից և ուժեղ քամուց վնասված այգիներում անհրաժեշտ է՝

- Անհապաղ բարձրացնել վազի հողի վրա ընկած հատվածները, տեղադրել հենակներ, ստեղծել պայմաններ՝ բնական օդափոխության ապահովման համար
- Կտրել ու հեռացնել վազի ուժեղ վնասված մատերը, վերականգնման ոչ ենթակա շվերը և խիստ վնասված ողկույզները
- Ողկույզների փտումը կանխելու համար (որը շատ հավանական է) խորհուրդ է տրվում այգիները սրսկել Բոտրանի 1,0 - 1,5 կգ/հա նորմայով կամ Տելդորի 1,0 կգ/հա նորմայով:

Արարատի և Արմավիրի մարզերում խաղողի այգիներում նկատվում է մոխրագույն փտում հիվանդության առանձին օջախներ, իսկ որոշ տեղերում՝ ողկույզների փտման ավելի հաճախակի հանդիպող դեպքեր: Օջախային վարակի դեպքում բուժումները կարելի է կատարել ձեռքի սրսկիչներով՝ սրսկելով միայն վարակված վազերը, իսկ մասսայական վարակի դեպքում կատարել համատարած սրսկումներ՝ օգտագործելով Բոտրան 1,0 - 1,5 կգ/հա կամ՝ Տելդոր 1,0 կգ/հա:

Իսկ եթե նկատվում են նաև խաղողի ալրացողի հետքեր, ապա ցանկալի է սրսկումը կատարել Զատո կամ Զատո սթար թունաքիմիկատներից որևէ մեկի 0,4-0,6 կգ/հա նորմայով:

* * *

Կարտոֆիլի սպասվող բերքի և ներկայիս գների վերաբերյալ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը տեղեկացնում է, որ հանրապետությունում սեփական արտադրության հաշվին ոչ միայն բավարարվում է ներքին սպառման ամբողջ պահանջարկը, այլև հնարավորություններ են ստեղծվում արտահանումների համար: Այդ առումով բացառություն չէ նաև ընթացիկ տարին: Արարատյան հարթավայրում մշակվում են կարտոֆիլի վաղահաս սորտեր, որոնց բերքահավաքը սկսվում է ապրիլ ամսից և ավարտվում հուլիսին: Հանրապետության բարձրադիր գոտում հիմնականում մշակվում են ուշահաս սորտեր, որոնց մասսայական բերքահավաքը սկսվում է սեպտեմբերի կեսերից, իսկ նույն գոտու համեմատությամբ ցածրադիր հատվածներում մշակվող միջահաս և միջուշահաս սորտերի բերքահավաքն արդեն մեկնարկել է: Ստացվում է այսպես, որ ամբողջ օգոստոս ամսվա ընթացքում, սեզոնի հետ պայմանավորված, խաթարվում է շուկայում կարտոֆիլի բավարար մատակարարումը, որն էլ հանգեցնում է ժամանակավոր գնաճի: Վստահեցնում ենք հանրապետության սպառողներին, որ մինչև սեպտեմբեր ամսվա առաջին կեսը շուկայում աստիճանաբար կդիտվի կարտոֆիլի գնանկում, իսկ ամսվա վերջում գինը կհավասարվի նախորդ տարիների մակարդակին: Նախարարությունը վերահսկում է իրավիճակը և հավաստիացնում, որ առաջիկայում արդեն կարտոֆիլի շուկայում կդիտվեն դրական փոփոխություններ:

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն

Ինքնահոս ջրամատակարարումը կթեթեւացնի գյուղացու հոգսը Էջ 4

Վնասի չափերն ուսումնասիրելու նպատակով Էջ 6

Մասնագետի խորհուրդը Էջ 7

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑ

Շահագործման է հանձնվել հանրապետության ամենախոշոր սպանդանոցը

1

Ավարտելով իր խոսքը՝ Սերգո Կարապետյանը վստահեցրել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը հնարավորինս կաջակցի նորակառույց սպանդանոցի ամենօրյա աշխատանքների կազմակերպման հարցում:

Ընկերության համասեփականատեր Արմոնդ Հախվերդյանն իր հերթին նշել է, որ մինչև տարեվերջ շահագործման կհանձնվի նաև աշխատանքային մեկ հերթափոխում մինչև 200 գլուխ խոշոր եղջերավոր անասունների մորթը կազմակերպելու հնարավորություն ունեցող հոսքագիծը:

Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Մոհամմադ Ռեիսին ընդգծել է, որ հայկական մսամթերքն իր համային բարձր հատկանիշների շնորհիվ իրանական շուկայում ունի մեծ պահանջարկ, և սպանդանոցի բացումը թույլ կտա Հայաստանից արտահանել որակյալ մսամթերք: Դեսպանը չի բացառել, որ հետագայում Հայաստանի այլ մարզերում ևս հնարավոր է հիմնվեն նույն եղանակով մորթ իրականացնող այլ սպանդանոցներ:

Մինչ այժմ Մասիսի սպանդանոցում փորձնական մորթի են ենթարկվել հանրապետության տարբեր մարզերից, առավելապես Սյունիքից ներկրված ավելի քան 700 գլուխ մանր եղջերավոր կենդանիներ:

Գյուղատնտեսական նշանակության նոր տարածքներ

1

Նախարար Սերգո Կարապետյանն ուղևորվել է նաև Աբովյան քաղաքում գործող եվրոպական արտադրության նորագույն տեխնոլոգիաներով հագեցած սնկի արտադրության և վերամշակման «Առողջ սունկ» ՍՊԸ: Սնկի արտադրամասում նախարարի շրջայցի ընթացքում ընկերության տնօրեն Արեգ Ազոյանը տեղեկացրել է, որ վերջին տարիներին այստեղ արձանագրվել է պատրաստի հումքի, թարմ սնկի և սնկի պահածոների արտահանման դինամիկ աճ՝ անցյալ մեկ տարվա ընթացքում հատելով 1 միլիարդ դրամի արտահանման շեմը: Նա նաև հավելել է, որ ընկերությունում արտադրվում են թարմ շամպինյոն, կախասունկ և պորտոբելլո տեսակի սնկեր, տարեկան արտադրության ծավալը կազմում է շուրջ 960 տոննա:

Ամփոփելով այցի արդյունքները՝ նախարարը նշել է, որ 2015 թվականին մարզի գյուղատնտեսության ոլորտում զգալի աճ է գրանցվել: «Այս տարի բարենպաստ պայմաններ են ստեղծվել Կոտայքի մարզում գյուղատնտեսության զարգացման համար, սպասվում է հացահատիկի, մրգի և հատապտղի բարձր բերք: Ընդհանուր առմամբ, մարզի վերջին տարիների ամենամեծ ձեռքբերումներից է վարելահողերի մշակության ծավալների աճը, ինչի արդյունքում 2015 թվականին մարզում մշակվել է 18021 հա վարելահող՝ նախորդ տարվանից գրեթե հազար հեկտարով ավելի: Համոզված եմ, որ Կոտայքի մարզում մշակվող հողերի ծավալը տարեցտարի կշարունակի ավելանալ»,- նշել է նախարար Սերգո Կարապետյանը:

Նախարարը նաև գոհունակություն է հայտնել մարզում ջերմոցային տնտեսությունների արագ զարգացմամբ և պտղատու այգիներ հիմնելու կապակցությամբ՝ շեշտելով, որ այս երկու ճյուղերը շատ կարևոր ու հեռանկարային նշանակություն ունեն մեր հանրապետության գյուղատնտեսության ոլորտի համար:

Կարկտահարված դաշտերի ուսումնասիրություն

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն աշխատանքային այցով մեկնել է Արարատի մարզի մի շարք համայնքներ՝ ծանոթանալու օգոստոսի 22-ին տեղացած ուժեղ կարկուտից տուժած համայնքների կրած վնասներին:

Սկզբում նախարարը, Արարատի մարզպետ Ռուբիկ Աբրահամյանի ուղեկցությամբ, այցելել է բնական աղետից ամենաշատը տուժած Շահումյան համայնք, տեղում ծանոթացել վնասի իրական չափերին: Այնուհետև նախարարն ուղևորվել է կարկտահարությունից վնասներ կրած Այգեզարդ, Այգեպատ, Վերին Արտաշատ և Ոստան համայնքներ: Տուժած բոլոր տնտեսություններում նախարարը զրուցել է գյուղացիների հետ, նշել, որ կարկուտի պատճառած վնասները հաշվարկելու համար ստեղծվել են համապատասխան հանձնաժողովներ, որոնց աշխատանքի արդյունքներն ամփոփումից հետո կներկայացվեն ՀՀ կառավարություն: «Հիմա առաջնահերթ խնդիրներից է վերականգնել կարկտահարված այգիները, որպեսզի հաջորդ տարի հաջողվի լիարժեք բերք ապահովել»,- նշել է իր խոսքում նախարար Սերգո Կարապետյանը: Նախարարը նաև հավելել է, որ առաջիկայում կառավարությունում կննարկվի վարկերի հետաձգման հարցը և կցուցաբերվի անհատական մոտեցում:

Ընդհանուր առմամբ, Արմավիրի և Արարատի մարզում կարկտահարության արդյունքում տարբեր չափի վնասներ է կրել շուրջ 16 համայնք, իսկ Շիրակի մարզում՝ 3 համայնք:

ՍԵՐՄՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ներկրվել է աշնանացան ցորենի սուպերէլիտային սերմացու

«Հայաստանի Հանրապետությունում ցորենի սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման ծրագրի» շրջանակներում, Ռուսաստանի Դաշնությունից «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի կողմից հանրապետություն է ներկրկվել 40 տոննա աշնանացան ցորենի սուպերէլիտային սերմացուի խմբաքանակը: ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն այցելել է Մասիսում գտնվող պահեստ և անձամբ հետևել աշնանացան ցորենի սերմացուի բեռնաթափման և բաշխման գործընթացին:

Ներկրված սերմացուն հատկացվելու է Շիրակի, Լոռու, Սյունիքի և Գեղարքունիքի մարզերի ցորենի սերմնաբուծությամբ զբաղվող այն ֆերմերներին, որոնք նախկինում ընդգրկված են եղել նշված ծրագրում և ունեն յոթ և ավելի հեկտար ջրովի վարելահողեր: Ներկրված սերմացուից ակնկալվում է ստանալ մեկ հեկտարից նվազագույնը 50 ցենտներ ցորենի բերք: Սերմացուի մի մասը կտրամադրվի «Գյումրիի սելեկցիոն կայան» ՓԲԸ-ին:

Սերմացուն տրամադրվել է շահառուներին 2015 թվականի աշնանացանի աշխատանքները ժամանակին կատարելու, ցանքատարածությունների ու համախառն բերքի ծավալների և գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների եկամուտների ավելացման նպատակով:

«Ծրագրի շնորհիվ վերջին հինգ տարիներին սերմնաբուծության ոլորտում մեզ հաջողվել է հասնել բարձր արդյունքների. միայն այս տարի հացահատիկային մշակաբույսերի շուրջ 11 հազար հեկտար լրացուցիչ ավել ցանք է իրականացվել: Ցորենի միջին բերքատվությունը, մեկ հեկտարի հաշվով, 2014 թվականին ավելացել է 83 տոկոսով, իսկ 2015 թվականին բերքի համախառն արտադրության ծավալները կգերազանցեն նախորդ տարվա մակարդակը», - նշել է Սերգո Կարապետյանը:

Ադրադառնալով հացահատիկի բերքահավաքի աշխատանքներին՝ նախարարը նշել է, որ դրանք կավարտվեն 10 օրվա ընթացքում, ակնկալվում է, որ այս տարի կգերազանցվեն վերոգրյալ ցուցանիշները: Նախարարը հավելել է, որ ընթացիկ տարում աշնանացան ցորենի պահանջարկը մարզերի կողմից կազմում է 3 875 տոննա:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի տնօրեն Վլադիմիր Մանուկյանը զեկուցել է նախարարին, որ ծրագրով նախատեսված է հանրապետություն ներկրել 1509 տոննա առաջին վերարտադրության և 40 տոննա սուպեր էլիտա սերմեր, որից օգոստոսի 31-ի դրությամբ արդեն ներմուծվել է 1300 տոննա առաջին վերարտադրության և 40 տոննա սուպերէլիտար սերմեր: Մնացած խմբաքանակը հանրապետություն կհասնի մինչև սեպտեմբերի 8-ը:

Ֆերմեր Վռամ Գյուլզադյանը, ով արդեն 4 տարի է, ինչ ծրագրի շահառուներից է, հաջողված է համարում այս ծրագիրը և նշում է, որ ձեռքբերված էլիտային սերմացուից հեկտարից միջինը 7 տոննա բերք է ստացել: Սերմացուն հատկացվում է գյուղացիական տնտեսություններին՝ հաջորդ տարի բերքահավաքից հետո 1:2 փոխհարաբերությամբ աշնանացան ցորենի էլիտա սերմացուի վերադարձի պայմանով:

ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը, սահմանային վերահսկողության շրջանակներում, արգելել է Հնդկաստանից Rajdhani ընկերության արտադրության դեղին սիսեռի, Rajdhani SELECT ընկերության արտադրության ռաֆինացված, մանր աղացած ցորենի սպիտակ ալյուրի և սպիտակաձավարի, ինչպես նաև AASHIRVAAD ընկերության արտադրության ցորենի թեփով ալյուրի ներմուծումը Հայաստան:

Ընդհանուր 800 կգ քաշով նշված խմբաքանակների պիտանիության ժամկետները լրացել են օգստոս ամսվա վերջին:

ՍԱՊԾ լրատվական ծառայությունից հայտնում են, որ բեռի ներմուծումն արգելվել է՝ համաձայն «Սննդամթերքի անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, որով արգելվում է Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծել սննդամթերք, եթե ընդհանուր պիտանիության ժամկետի լրանալուն մնացել է 30 օրից քիչ կամ առավելագույնը 120 օր պիտանիության ժամկետ ունեցող ապրանքատեսակների դեպքում՝ մեկ քառորդից պակաս ժամկետ:

ԱԳՐՈ Լրատու
Օգոստոս 25 - սեպտեմբեր 5, 2015 թ.
թիվ 22 (2077)

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲՈՐՍԱՆԵՐՈՒՄ ԵՎ ԱՇԽԱՐՀԻ ՈՐՈՇ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ԿԱԹԻ, ՉԵԴԴԵՐ ՏԵՍԱԿԻ ՊԱՆՐԻ ԵՎ ՑՈՐԵՆԻ ԳՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կաթի գների վերաբերյալ

Աշխարհում յուրաքանչյուր տարի արտադրվում է մոտ 750 մլն. տոննա կաթ, որից շուրջ 638 մլն. տոննան՝ կովի կաթ է:

Միջազգային բորսաներում նկատվել է III կարգի կաթի գների անկում: NASDAQ բորսայում III կարգի կաթի գինը 2014թ. համեմատ նվազել է շուրջ 10.3%: Համաձայն կանխատեսումների՝ սպասվում է, որ մինչև տարեվերջ կաթի գինը միջազգային բորսաներում կնվազի ևս 21.5%:

Նվազումը պայմանավորված է յուրաքանչյուր տարի աշխարհում կաթի արտադրության ծավալների 1-2 %-ի ավելացմամբ, որի հետևանքով առաջանում է կաթի ավելցուկ:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ ԵՄ երկրների դեմ Ռուսաստանի Դաշնության կողմից պատժամիջոցների շարունակումն առաջացրել է կաթնային արտադրանքի ավելցուկ, և ԵՄ երկրները ստիպված են սպառման նոր շուկաներ գտնել:

ԵՄ որոշ երկրներում կաթի գների դինամիկան
2014-2015թթ. հունիս ամսվա դրությամբ

դրամ/կգ

	15/06/2014	15/06/2015	%
Բելգիա	201	144	-28.4
Բուլղարիա	189	133	-29.6
Դանիա	229	165	-27.9
Ֆրանսիա	201	165	-17.9
Գերմանիա	206	154	-25.2
Լատվիա	162	112	-30.9
Լիտվա	145	112	-22.8
Էստոնիա	178	133	-25.3
Լեհաստան	178	144	-19.1
Նիդերլանդներ	234	160	-31.6
Ռումինիա	162	112	-30.9
Ռուսաստան	232	168	-27.5
Բելառուս	135	121	-10.3
Ղազախստան	171	147	-14
Ղրղզստան	122	118	-3.2
Թուրքիա	153	138	-9.8

Ինչպես երևում է, ԵՄ երկրներում կաթի գները, նախորդ տարվա համեմատ, նվազել են: ԵՄ երկրներում կաթի գինը մեկ տարվա ընթացքում նվազել է մինչև 30.9%: Աղյուսակում նշված ԵՄ երկրներում կաթի միջինացված գինը 2014թ. կազմել է 173 դրամ՝ 1կգ համար, իսկ 2015թ.՝ 127 դրամ: Այսպիսով՝ աղյուսակում նշված ԵՄ երկրներում մեկ տարվա ընթացքում կաթի գինը միջինում նվազել է 26.5% կամ 46 դրամ:

Նոր Զելանդիայում կաթի գինը 2015թ. միայն մայիս ամսին նվազել է 5.9%-ով, իսկ մեկ տարվա ընթացքում այն նվազել է մոտ 42%-ով: Նմանատիպ իրավիճակ է նաև կաթ արտադրող խոշորագույն երկրներ համարվող Ավստրալիայում և ԱՄՆ-ում: Օրինակ՝ Ավստրալիայում կաթի գինը նվազել է ընդամենը 12%-ով, իսկ ԱՄՆ-ում 11%-ով՝ կազմելով 36,2 ցենտ՝ 1 կգ համար կամ 173 դրամ:

Կաթի միջազգային գների անկումն իր բացասական ազդեցությունն է թողել նաև Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ ԵՏՄ) երկրների կաթի գների վրա: ԵՏՄ երկրներում կաթի գները, նախորդ տարվա համեմատ, նվազել են: ԵՏՄ երկրներում կաթի միջինացված գինը 2014թ. կազմել է 165 դրամ՝ 1կգ համար, իսկ 2015թ.՝ 138.5 դրամ: ԵՏՄ երկրներում մեկ տարվա ընթացքում կաթի գինը միջինում նվազել է 13.75% կամ 26.5 դրամ:

Հայաստանի Հանրապետության հարևան երկրներում նույնպես նկատվում է կաթի գների անկում: Մասնավորապես, Թուրքիայում, 2014թ. համեմատ, 2015թ. կաթի գինը նվազել է 9.8% և կազմել է 138 դրամ/կգ:

Պանրի գների վերաբերյալ

Որոշ երկրներում պանրի (Չեդդեր) գները՝
2014-2015թթ. օգոստոս ամսվա դրությամբ

դոլար/կգ

	Օգոստոս 2014թ.	Օգոստոս 2015թ.	%
Ավստրալիա, Նոր Զելանդիա	4.2 (1718 դրամ)	2.9 (1385 դրամ)	-31
ԱՄՆ	4.8 (1963 դրամ)	3.8 (1815 դրամ)	-20.8
Գերմանիա	4.2 (1718 դրամ)	2.4 (1146 դրամ)	-42.8
Լեհաստան	3.5 (1431 դրամ)	2.8 (1337 դրամ)	-20
Միացյալ Թագավորություն	3.5 (1431 դրամ)	2.9 (1385 դրամ)	-17.1

Ինչպես երևում է աղյուսակից, Չեդդեր տեսակի պանրի գները նույնպես նվազել են: Նվազման պատճառներից մեկը կաթի գների անկումն է համաշխարհային շուկայում:

Ցորենի գների վերաբերյալ

Աշխարհում յուրաքանչյուր տարի արտադրվում է մոտ 725 մլն. տոննա ցորեն: Ցորենի գները միջազգային շուկաներում՝ համաձայն INDEXMUNDI-ի տվյալների:



**INDEXMUNDI-ի տվյալները կազմված են Համաշխարհային բանկի տվյալների հիման վրա:*

Ինչպես երևում է գծապատկերից, մեկ տարվա ընթացքում գրանցվել է ցորենի գների անկում: Մեկ տարվա ընթացքում ցորենի գինը նվազել է շուրջ 14.5%: 2015թ. հունվար ամսից սկսած ցորենի գնի նվազման պատճառ են հանդիսացել մի շարք կազմակերպությունների կողմից բարձ բերքի վերաբերյալ կատարած կանխատեսումները:

ՌԴ հարավային հատվածում ցորենի գներն աստիճանաբար անկում են ապրել: Հուլիսի 10-ին արձանագրված գինը -11.1%-ով ցածր է ապրիլի 10-ին արձանագրված գնից: Գնային նման տատանումը, պայմանավորված է ինչպես 2014թ. ցորենի աննախադեպ բերքով, այնպես էլ Ռուսաստանի կառավարության վարած հատուկ քաղաքականությամբ: Մասնավորապես, ՌԴ կառավարությունը ընթացիկ տարվա մայիսին որոշում է ընդունել 2015թ. մայիսի 15-ից վերացնել երկրից արտահանվող ցորենի վրա դեռևս նախորդ տարվանից սահմանված մաքսատուրքը, ինչը ևս բնականորեն է ազդել ցորենի գնի նվազման վրա: Ներկայումս ռուսաստանյան շուկայում (հարավային հատված) 1 տոննա ցորենի արժեքը 77748 դրամ է (1 ռուբլին = է 6.82 դրամ):

Աշխարհում ցորենի զգալի մասը համաշխարհային մի քանի խոշոր բորսաների (CBOT, MATIF, LIFFE և այլն) միջոցով վաճառվում է աշխարհում ցորենի պահանջարկ ունեցող երկրներին: Այդ բորսաներում, 2014թ. համեմատ, 2015թ. նույնպես գրանցվել է գների անկում:

Ցորենի գնանշումների դինամիկան համաշխարհային բորսաներում՝
2014-2015թթ. օգոստոս ամսվա դրությամբ

	19.08.14թ. դոլար մեկ տոննայի դիմաց	18.08.15թ. դոլար մեկ տոննայի դիմաց	+/- % մեկ տարվա ընթացքում	Գինը ՀՀ դրամ/կգ 18.08.15 տվյալներով	Փոխարժեք $-դրամ 18.08.2015 դրությամբ
Ցորեն					477.62
CBOT Չիկագո	204.7 (83558 դրամ)	183.8 (87786 դրամ)	-10.2	87.7	
LIFFE Լոնդոն	201.6 (82293 դրամ)	178.6 (85303 դրամ)	-11.4	85.3	
MATIF Փարիզ	230.4 (94049 դրամ)	192.4 (91894 դրամ)	-16.4	91.8	

CBOT Չիկագո և LIFFE Լոնդոն բորսաներում ցորենի գների դրամային արտահայտությամբ գնաճը պայմանավորված է փոխարժեքի տատանումից: Միջազգային բորսաներում ապագայում արձանագրվող գների վրա անմիջական ազդեցությունն ունեն նաև մի շարք հեղինակավոր կազմակերպությունների (ՄԱԿ-ի ՊԳԿ, USDA և այլն) 2016թ. համար կատարված կանխատեսումները:

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն

ՈՒՍՈՒՑՈՒՄ

ԻՆՔՆԱՀՈՍ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄԸ ԿԹԵԹԵՎԱՑՆԻ ԳՅՈՒՂԱՑՈՒ ՀՈԳՍԸ

Այս տարվա եղանակային բարենպաստ պայմաններն ու ոռոգման ջրի անխափան մատակարարումը նպաստեցին առատ բերքի ստացմանը: §Արտաշատ¦ ջրօգտագործողների ընկերությունը գործում է 2003թ-ից: Ընկերության սպասարկման տարածքն ընկած է Արտաշատ ջրանցքի իշխման տակ: Հիմնական ջրաղբյուրներն են Արտաշատի ջրանցքը և Ազատի ջրամբարը, որոնք սպասարկվում են «Սևան-Հրազդանյան ջրառ» ՓԲԸ-ի կողմից:

Ընկերության սպասարկման տարածքն ընդգրկում է Արտաշատի տարածաշրջանի 18 համայնքներ՝ Այգեզարդ, Հնաբերդ, Այգեպատ, Գետազատ, Այգեստան, Մրգանուշ, Վարդաշեն, Վ. Դվին, Ն. Դվին, Նորաշեն, Շահումյան, Վ. Արտաշատ, Քաղցրաշեն, Նարեկ, Ոստան, Դեղձուտ, Կանաչուտ և Արտաշատ քաղաքը՝ շուրջ 5400 հա ոռոգելի տարածքով: Ընկերությունը ունի 10258 ջրօգտագործող:

Մեր հանդիպման ընթացքում Արտաշատ ՋՕԸ-ի տնօրեն Թադևոս Թադևոսյանը նշել է. «Տարվա ընթացքում Արարատի մարզ են այցելել ՀՀ վարչապետը, գյուղատնտեսության նախարարը և անմիջապես գյուղացուց տեղեկացել նրանց մտահոգող հարցերի մասին. վերջերս Արարատի մարզ էր այցելել վարչապետ Հ. Աբրահամյանը և բնակչությունից տեղեկացել, որ ջրամատակարարումը կազմակերպվել է պատշաճ կերպով. խաղողի առատ բերք է սպասվում: Գյուղացուն մտահոգում է խաղողի բերքի իրացման խնդիրը, սակայն վարչապետը հուսադրել է, որ մթերող գործարաններին կտարամադրվեն երկարատև մարման ժամկետով, ցածր տոկոսադրույքով վարկեր, որպեսզի գյուղացու աճեցրած ամբողջ բերքը մթերվի»:

Արտաշատ ՋՕԸ-ի տնօրեն Թադևոս Թադևոսյանը նշել է նաև առաջիկա անելիքների մասին: Ըստ նրա՝ ընկերության սպասարկման տակ գտնվող 2 համայնքներին՝ Նարեկին ամբողջությամբ և մասամբ Քաղցրաշեն համայնքին ոռոգման ջուրը մատակարարվում է պոմպակայանների միջոցով, որոնք տարեկան ծախսում են 10,5 մլն. կվտ էլեկտրաէներգիա, որի հետևանքով բարձրանում է ջրի սակագինը: Հոսանքի գինը սուբսիդավորվում է պետբյուջեի միջոցներով: Ներկայումս աշխատանքներ են տարվում Գառնի-Քաղցրաշեն ջրագծի կառուցման հետ կապված խնդիրները լուծելու համար, որը կապահովվի ինքնահոս ջուր՝ նշված 2 համայնքներին, միաժամանակ հնարավորություն կստեղծվի չմշակվող հողատարածքներ ոռոգելու համար: Արդյունքում կունենանք էլեկտրաէներգիայի զգալի խնայողություն:

Ոռոգման սեզոնի ընթացքում ՋՕԸ-ի աշխատանքները իրականացվում են շուրջօրյա, իսկ ջրամատակարարման ավարտից հետո վերանորոգման աշխատանքներ են կատարվում հաջորդ տարվա համար:

Մանվել Կիրակոսյան

ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

ԲԱՐԵԼԱՎՎԵԼ Է ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻ ՋՐԱՐԲԻԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության ֆինանսական միջոցներով, ՀՀ Արագածոտնի մարզի Նիգավան համայնքում, «Հանուն գյուղական համայնքների բարգավաճման» ծրագրի շրջանակներում, բարելավվել է արոտավայրերի ջրարբիացման համակարգը:

Արոտավայրերի ջրարբիացման նպատակով, կառուցվել է 925 մ երկարությամբ ջրագիծ, տեղադրվել է 3 խմոց, որոնց հետագա պահպանությունն իրականացնելու է գյուղապետարանը: «Ծրագրի իրականացումը կնպաստի անասնագլխաքանակի աճին, կենդանիների կաթնատվության ավելացմանը, քանի որ արոտավայրերում արդեն առկա է խմելու ջուրը: Այդպիսով՝ անասնապահության զարգացման և ստացված եկամուտների ավելացման հաշվին գյուղացիները կարող են հոգալ իրենց ընտանիքների հոգսերը: Մեկ կովի փոխարեն կպահեն 2-ից 3-ը»,- նշում է Նիգավան համայնքի ղեկավար Արտաշես Գալստյանը:

Խոշոր եղջերավոր կենդանիների թիվը հասնում է 1280-ի, որից 600-ը կովեր են: Գյուղում ավելանում է նաև մանր եղջերավոր անասուների գլխաքանակը, ներկայումս առկա է 700 գլուխ մանր եղջերավոր կենդանի: Ինչ վերաբերում է կաթի իրացմանը, ապա հիմնականում այն մթերում են Ապարանի պանրի գործարանին: Պրն. Գալստյանի տեղեկացմամբ, գյուղում փոքր է արտագաղթողների թվաքանակը, ինչը համայնքի նկատմամբ ունեցած մեծ սիրո և ավանդույթների պահպանման արդյունք է: «Լեռնային անասնապահական գյուղի համար այս ծրագրի իրականացումն էական նշանակություն ունի, քանի որ ազգաբնակչությունը եկամուտի ստացման այլ աղբյուրներ չունի»,- եզրահանգում է գյուղապետը:

Նելլի Սահակյան

ԴԻՄԱՆԿԱՐ

ԱՄԵՆ ԹՈՒՓ, ԾԻԼ ԽՆԱՄՔԻ, ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ԻՐ ՊԱՀԱՆՋՆ ՈՒՆԻ

Դեպի Խոտ գյուղ տանող ճանապարհի Ենգինջա հանդամասում գտնվող իր այգում Արգամ Ալեքսանյանը մեզ դիմավորում է բարձր տրամադրությամբ:

Պարզվում է, որ Ռուսաստանի Դաշնության Յարոսլավլ քաղաքի Օդատիեզերային ակադեմիայում սովորող որդին արձակուրդ է եկել. «Կավարտի, կգա, կհամալրի մեր բանակի շարքերը...», - երազկոտ, բայց հպարտ տոնով ասում է Արգամը: Հազիվ 14 տարեկան էր, երբ ընդունվեց Մոնթե Մելքոնյանի անվան ռազմա-մարզական վարժարան: Դժվար էր, անշուշտ, պատանու համար միանգամից ինքնուրույն կյանքով ապրել, բայց երբեք չի տրտնջացել, չի բողոքել. այս ամենի մասին հայրը ակնածանքով է պատմում և մատնացույց անելով քիչ հեռու գտնվող այգին, ասում. «Էս տարի առաջին անգամ եմ էնտեղ սկսել ցանել, 4 հազար հատ լոբու հենակ եմ տնկել, իմ հաշվարկով, ամեն մեկից մինչև 1 դոլար եկամուտ պիտի ստանամ, դրա 80 տոկոսն էլ՝ շահույթ, դա իմ երեխեքի համար է, որ կարողանան իրենց երազանքներն իրականացնել»: Պնդում է, որ անպայման մոտիկից տեսնենք այգին. ճանապարհին մեկիկ-մեկիկ ներկայացնում է առուն, որ իր ձեռքերով է փորել, նոր տնկած խնձորենին, հոնի ծառը, որից անցած տարի մի քանի «եկամուտ ստացան», սև մասրենին, նախորդ օրվա հնձած խոտը... պատմում է, բայց ավելի շուտ, կարծես խոսում նրանց հետ, անպայման ձեռքով շոշափելով տերևը, խոտը, ձեռքը թրջում առվի ջրում՝ ինչպես փողոցով անցնող մարդկանց հետ կշփվեր: Չի դժգոհում անգամ նրանից, որ շաբաթներով տուն չի գնում. ոչ թե մտահոգվում է, որ բերքը կգողանան, այլ, ժամանակը չի հերիքում, ասում է, որ ամեն թուփ, ծիլ խնամքի, մշակության իր պահանջն ունի:

Տարեցտարի ընդլայնել է հողամասը, բայց ոչ միայն այն պատճառով, որ ավելի շատ բերք ստանա, այլև կարողանա ճիշտ օգտագործել հողը. Սյունիքի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնի հետ վաղուց է համագործակցում, դեռ տարիներ առաջ արժանացել է ԳԱՄԿ-ի «Համագործակցող ֆերմեր» պատվոգրի: Ինքն էլ շատ է կարդում, փոքրիկ հողակտորի վրա ցանքաշրջանառություն կիրառում: Գյուղատնտեսական բարձրագույն կրթություն ունի, բայց նոր տեխնոլոգիաներ կիրառելու համար չի զլանում ԳԱՄԿ-ի խորհրդատուներից խորհուրդ հարցնել: Հենց նրանց խորհրդին հետևելով և նաև մարդկանց պահանջարկը հաշվի առնելով սկսել է էկոլոգիապես մաքուր բանջարեղենի արտադրությամբ զբաղվել. «Ծավալներն այնքան շատ չեն, որ չկարողանամ իրացնել, մարդիկ կան, ովքեր համոզված լինելով, որ, օրինակ, լոբու մշակության համար հանքային ոչ մի պարարտանյութ, թունաքիմկատ չեմ օգտագործում, անգամ շուկայականից ավելի բարձր գնով ձեռք բերելու պայմանով, անպայման մեզ են դիմում», - ասում է Արգամը՝ շեշտելով, որ իր հողամասը գտնվում է բնակլիմայական առումով բարենպաստ գոտում և անգամ այս տարվա երաշտի պայմաններում հաջողվում է բարձր բերք ստանալ:

Մինչ Արգամը ոգևորված պատմում էր հողամասի, նաև հետագա ծրագրերի, նաև էկոլոգիապես մաքուր մսամթերք արտադրելու մասին, լույսի նման ճերմակ թոռնուհիները պտտվում են նրա շուրջը: Երկու-երեք տարեկան աղջնակները վազվզում են մինչև այգու հյուղակ և վերադառնում ձմերուկից կարմրած այտերով: Արգամը երանությամբ նայում է նրանց կողմը և ասում. «Այ, նրանց համար եմ էսքան չարչարվում»:

Ս. Շահնազարյան

ԿՈՈՊԵՐԱՑԻԱ

ՆՈՐԱՍՏԵՂԾ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԸ ԿԱՋԱԿՑԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ

«Մեր գյուղում հիմնական աշխատուժը կանայք են, դա նշանակում է՝ հատկապես նրանց պետք է աջակցել»,- ասում է Այգեյովիտ համայնքի գյուղատնտեսական կոոպերատիվի անդամ Գայանե Ամիրյանը:

«ՕՔՍՖԱՄ»-ի աջակցությամբ, ՀՀ Տավուշի մարզի Այգեհովիտ համայնքում, գյուղատնտեսական կոոպերատիվը ստեղծվել է վերջերս: Կորցնելով բուժքրոջ իր աշխատանքը՝ Գայանեն միացավ նորաստեղծ կոոպերատիվին: «Գյուղում ապրելն, ինչ խոսք, հեշտ չէ, բայց մենք մաքառում ենք և չենք պատրաստվում հեռանալ այս վայրից, նոր ճանապարհներ, հնարավորություններ ենք որոնում: Երբ նախորդ տարի տեղեկացանք, որ կոոպերատիվի ստեղծման համար կա աջակցություն ստանալու հնարավորություն, եկանք այն եզրահանգման, որ դա լուրջ առաջարկ է: Զրուցեցինք մարդկանց հետ, գտնվեցին ցանկացողներ, հանդիպումներ կազմակերպեցին, գրանցվեցինք և լծվեցինք գործի»,- հիշում է տիկին Ամիրյանը:

Կոոպերատիվի կազմում հիմնականում կանայք են, բացառությամբ՝ նախագահի: Նախագահին ընտրել են, քանի որ նա ունի կազմակերպչական մեծ փորձ: Կանանց թիվը հասնում է 9-ի, որոնց տնտեսապես պետք է հզորացնել, չէ որ խնդիրներն ընտանիքներում ծագում են հիմնականում ֆինանսական միջոցների անբավարարության պատճառով: Կանայք հիմա ունեն թեև փոքր, սակայն կայուն եկամուտ, իսկ ընտանիքի բյուջեում՝ իրենց խնայողությունները: Գաղտնիք չէ, որ ֆինանսական բարեկեցությունն ամրացնում է ընտանիքը: Գայանեի կարծիքով, կարևորն այն է, որ կանանց մոտ վերականգնվել է հավատը: «Մենք հավատում ենք մեր ուժերին, գիտենք, որ համատեղ աշխատելով կարող ենք օգնել ոչ միայն մեր ընտանիքներին, այլև՝ համայնքին: Մտածում ենք, եթե ամեն ինչ բարեհաջող ընթացք ունենա, մեր եկամուտի 10-15%-ը կտրամադրենք մանկապարտեզին, որտեղ 70 երեխա է այցելում», - նշում է տիկին Գայանեն:

Գյուղատնտեսական կոոպերատիվն արտադրելու է ջերմոցային բանջարեղեն: «Ուժը, ցանկությունն ու հնարավորություններն առկա են, և հիմա մեր աշխատանքով է պայմանավորված հաջողությունների հետագա ընթացքը»,- հավելում է նա:

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԲԱՐՁՐԱՑԵԼ Է ԿԱԹԻ ՄԹԵՐՄԱՆ ԳԻՆԸ

Արտադրվող կաթի ծավալների նվազմանը զուգընթաց, հանրապետությունում բարձրացել է կաթի մթերման գինը, որն այսօրվա դրությամբ տատանվում է 130-150 դրամի սահմաներում:

Կաթի մեծածավալ մթերումներ այսօր հանրապետությունում իրականացնում է շուրջ 70 ընկերություն: Մթերման գների բարձր ցուցանիշներ են արձանագրել «Ահարոն Ղարիբյան» (ՀՀ Արարատի մարզ), «Էլոլա» (ՀՀ Սյունիքի մարզ), «Իգիթ» (ՀՀ Շիրակի մարզ), «Ապարանի պանրի գործարան» (ՀՀ Արագածոտնի մարզ) և մի շարք այլ ընկերություններ: «Դուստր Մելանյա» ՍՊԸ (ՀՀ Լոռու մարզ)՝ ելնելով որակական հատկանիշներից, կաթի 1 լիտրը մթերում է 130-140 դրամով: «Կարծում եմ, պետության կողմից պետք է սահմանվի կաթի մթերման նվազագույն և առավելագույն գին, որպեսզի տատանումները շատ մեծ չլինեն, անակնկալների չհանդիպի թե ֆերմերը և, թե վերամշակողը: Կաթի գնի սահմանված շեմը կկառավարի գնագոյացումը»,- ասում է ընկերության տնօրեն Ռուբեն Հարությունյանը:

Կաթնամթերքի արտադրությունում մասնագիտացված վերամշակող այս ընկերությունն օրական մթերում է 4-5 տոննա կաթ, իսկ ձմռան ամիսներին նվազելով՝ այն հասնում է 2-3 տոննայի: Նրա տեղեկացմամբ, աշխատում են հիմնականում մթերող միջնորդ կազմակերպությունների կամ անհատների հետ: «Վերամշակողները բոլորովին էլ դեմ չեն, որպեսզի կաթի մթերման գները լինեն շուկայական, սակայն դրանք չպետք է լինեն կամայական»,- հավելում է ընկերության տնօրենը:

Խնդրի կարգավորման հնարավոր տարբերակներից մեկն էլ, ըստ Ռուբեն Հարությունյանի, սեփական ֆերմա ունենալն ու արտադրությունում գերակշռող մասը անձնական տնտեսության կաթի օգտագործումն է: «Դա կնպաստի արտադրության ծավալների, հետևաբար՝ նաև շուկայի ընդլայնմանը»,- եզրահանգում է նա: Իրենք, օրինակ, խնամում են 50 գլուխ կով, ստացված կաթն ամբողջությամբ վերամշակվում է արտադրությունում: Նույնիսկ կուզենային ավելացնել գլխաքանակը, սակայն դա ևս ֆինանսական լուրջ ներդրումներ է պահանջում:

Ինչ վերաբերում է մթերված կաթի դիմաց վճարումներին, ապա հանրապետությունում այն կատարվում է կանխիկ, և ֆերմերների կողմից հիմնականում այդ ուղղությամբ դժգոհություններ չկան: Իսկ կաթի մթերման գների օրեցօր բարձրացումը, ամենայն հավանականությամբ, կնպաստի հանրապետության անասնագլխաքանակի ավելացմանը: Կարևորն այն է, որ արտադրված կաթն իրացվում է ամբողջությամբ, և այն մեծ պահանջարկ է վայելում վերամշակող ընկերությունների կողմից: Իսկ դա նշանակում է, որ կաթ արադրողի և վերամշակողի միջև համագործակցությունը կայացած է:

Նյութերը՝
Նելլի Սահակյանի

ՇԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

ՍԵԽԻ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սեխը հայտնի է հնագույն ժամանակներից: Հավանաբար առաջին անգամ սկսել են մշակել Հնդկաստանի հյուսիսում: Հայրենիքը Միջին և Փոքր Ասիան է:

Մեր օրերում Թուրքմենստանում նշվում է «Սեխի տոնը»՝ օգոստոսի երկրորդ կիրակի օրը:

Սեխը դդմազգիների ընտանիքին պատկանող միամյա գետնամած բույս է: Ցողունների երկարությունը հասնում է 3 մետրի, հաստությունը՝ 3 սմ-ի: Տերևաթիթեղն ամբողջական է, թույլ ատամնաեզր, երկարությունը՝ 14-18 սմ, լայնությունը՝ 20-22 սմ: Պտուղը բազմասերմ կեղծ հատապտուղ է: Գոյություն ունեն մոտ 2000 տեսակներ, որոնք տարբերվում են պտղի չափերով, քաշով՝ 0,2-40 կգ, պտղամսի և կեղևի գույնով, բուրմունքով և համով:

Հնագույն տեսակներից է Կիլիկիայում մշակվող «Ադանա»-ն, որի սերմերով պատրաստված ջրային և ոգեթուրմերը ճանաչված հակահելմինտային միջոցներ են: Մեր հայրենիքում մշակվել և մշակվում են սեխի մոտ 10 տեսակներ՝ շալախ, ջառ-ջառ, խաթունատի, սնեյվազ, դութմա, ամքյար, միանդաբ, քալամքաշ: Սնեյվազը հնագույն և լավագույն տեսակներից մեկն է: Հատապտուղը միջին չափի է՝ ձվաձև կամ էլիպսաձև, թույլ կողավոր շագանակագույն-դեղնականաչավուն մակերեսով: Պտղամիսը շատ քաղցր է, վանիլի բուրմունքով: Երկար պահպանվող տեսակ է:

Հայաստանում հնագույն ժամանակներից հայտնի են եղել սեխի պտղամսի, հյութի, սերմերի, կեղևի բուժիչ հատկությունները,

որոնք նկարագրել է Ա. Ամասիացին: Սեխի պտղամիսը պարունակում է 7-13 տոկոս շաքարներ, մինչև 0,2 տոկոս խնձորաթթու, հարուստ է C վիտամինով՝ մինչև 30 մգ 100 գ հումքի մեջ, պարունակում է նաև B_1, B_2, PP, B_5, B_6, E վիտամիններ, ֆոլիաթթու, կալիում, մագնիում, կրեմնիում, ինուլին, երկաթ: Կորեացի գիտնականները ապացուցել են, որ սեխում կա լիկոպին ֆլավոնոիդ, որն ունի հակաուռուցքային հատկություն:

Սեխը բարձրացնում է տրամադրությունը, հանգստացնում է նյարդերը, նվազեցնում է ֆիզիկական հոգնածությունը, կանխարգելում է մարդու օրգանիզմի հյուսվածքների քայքայումը: Կրեմնիումը անհրաժեշտ է միացնող հյուսվածքների գոյացման, մաշկի և մազերի առողջության համար, ճնշում է վնասակար միկրոօրգանիզմների, սնկերի գործունեությունը, կլանում է ծանր մետաղները: Կրեմնիումով հարուստ սեխի հյութը և սերմերի թուրմը վերականգնում է օրգանիզմի դիմադրողականությունը, կարգավորում է նյութափոխանակությունը և լյարդի, երիկամների, վահանագեղձի, աղիների բնականոն գործունեությունը: Կալիումը և մագնիումը նպաստում են սիրտանոթային համակարգի բնականոն աշխատանքին, հեշտ յուրացվող երկաթը կանխարգելում է սակավարյունության առաջացումը: Սեխն ունի երիտասարդացնող և գեղեցկացնող ազդեցություն:

Սեխը մեր սննդակարգում

Սեխից պատրաստում են աղցաններ, մուրաբա, սառը օշարակ, թխվածք, ջեմ, դոշաբ, ցուկատներ, չիր: Հազարամյակներ շարունակ սեխը զարդարել է թե շինականի և թե արքաների սեղանները: Պատմությունը պահպանել է տեղեկություններ, թե որ ժամերին, ինչ քանակությամբ և որ հիվանդությունների դեպքում են ուտում սեխը երկրագնդի տարբեր վայրերում:

Սեխի հանդեպ չի նվազել նաև ընտրասերիչների հետաքրքրությունը ողջ Եվրոպայում. Ճապոնիայում բուծել են սեխի տեսակ, որի մեկ զույգը վաճառվել է 17 հազար դոլարով, իսկ Իսպանիայում արդեն մշակում են կիտրոնի համ ունեցող տեսակը:

Բժիշկ սննդաբանները զգուշացնում են, որ սեխի չարաշահումը կարող է առաջացնել ցավեր որովայնում: Սեխը չի կարելի ուտել կաթնամթերքի հետ: Խորհուրդ է տրվում ուտել որպես ինքնուրույն սնունդ՝ երկրորդ նախաճաշի կամ ետճաշիկի ժամերին: Սառեցրած սեխի պահպանման ժամկետը մինչև 3 ամիս է:

Արտերկրի փորձ

ՈՒԶԲԵԿՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Միշտ հետաքրքիր է այլ երկրի գյուղատնտեսության հետ ծանոթանալ, հետևել սխալների ուղղմանը, որոնք այս բարդ բնագավառում անխուսափելի են, ուրախանալ հաջողություններով և փորձել ընդօրինակել այն, ինչ մեզ համար կարող է լինել ուսանելի՝ բերելով զգալի հաջողություններ:

Վեջին տարիներին Ուզբեկստանի Հանրապետության գյուղատնտեսությունն առաջին հերթին ուղղված է եղել երկրի պարենային անվտանգության ապահովմանը: Հացահատիկի խնդրի արմատական բարելավման հետ միաժամանակ զարկ է տրվել պտուղ-բանջարեղենի արտադրությանը, ինչը ոչ միայն բարձրացրել է կենսապահովման մակարդակը, այլև զգալի չափով լուծել է բնակչության զբաղվածության խնդիրը:

Իրավիճակի արմատապես փոփոխությունը թերևս սկսվել է 1989 թվականին, երբ որոշում է ընդունվել 400 հազար հեկտար ոռոգելի հողեր հատկացնել գյուղացիական ընտանիքներին՝ որպես տնամերձ: Հետագա քայլերը ներառել են նաև ցանքերի կառուցվածքի էական փոփոխություններ. ի օգուտ հացահատիկային մշակաբույսերի՝ մոտ 2 անգամ կրճատվել են բամբակի ցանքատարածությունները, որի արդյունքում իրեն անհրաժեշտ հացահատիկի 80 %-ը ներկրող երկիրն այժմ լիիրավ ապահովում է դրանով:

Գյուղատնտեսական քաղաքականության առումով ևս կարևոր քայլեր են կատարվել

- լիկվիդացվել են պետական և կոլեկտիվ գյուղատնտեսական ձեռնարկությունները, որոնց հաշվին ստեղծվել են աշխատանքի բարձր արտադրողականությամբ ֆերմերական տնտեսություններ՝ զինված ժամանակակից ագրարային տեխնոլոգիաներով և տեխնիկայով,
- տեղի ունեցավ ագրարային սեկտորի առանձին բնագավառների դիվերսիֆիկացում, որի շնորհիվ զարգացավ կարտոֆիլի մշակությունը, մեղվաբուծությունը, թռչնաբուծությունն ու ձկնաբուծությունը, նոր զարկ տրվեց խաղողագործությունը,
- ընդլայնվեց գյուղատնտեսական արտադրության վարկավորման զեղչային համակարգը,
- ստեղծվեց ֆերմերական և գյուղացիական տնտեսությունների տեխնիկական սպասարկման արդյունավետ համակարգ՝ համապատասխան նյութատեխնիկական սպասարկում ապահովող ռեսուրսներով,
- ձևավորվեց գյուղատնտեսական արտադրանքի պահպանման, տեղափոխման և նրա արդյունաբերական վերամշակման լոգիստիկ համակարգ:

Այսօր երկրում գոյություն ունի 67804 ֆերմերական տնտեսություն, որոնց զարգացմանը նպաստում է անընդհատ կատարելագործվող օրենսդրական բազան: Սկսած 1997 թվականից՝ երկրի գյուղատնտեսությունը դրսևորում է կայուն և բարձր զարգացման տեմպեր՝ տարեկան 6-7%: 1991 թվականից մինչ այսօր գյուղատնտեսական արտադրանքի ծավալներն աճել են ավելի, քան 2 անգամ, մսի սպառումը մեկ շնչի հաշվով աճել է այդ ժամանակամիջոցում 1,3 անգամ, կաթի և կաթնամթերքինը՝ 1,6 անգամ, կարտոֆիլինը՝ 7 անգամ, բանջարեղենինը՝ 2 անգամ, մրգինը՝ գրեթե 4 անգամ:

Ներկա պահին երկրում արտադրվում է ավելի քան 17 միլիոն տոննա պտուղ-բանջարեղեն, մեկ շնչին բաժին է ընկնում տարեկան 300 կգ բանջարեղեն, 75 կգ կարտոֆիլ և 44 կգ խաղող: Ձեռնարկած միջոցների շնորհիվ անընդհատ աճում է արտահանման ներուժը. Ուզբեկստանն արդեն դարձել է որակյալ և միջազգային շուկայում մրցունակ գյուղմթերքի խոշոր արտահանող: Մեծ ուշադրություն է դարձվում տարվա ընթացքում պահեստավորման և վերամշակման հարցերին: Վերջին 10 տարում պտուղ-բանջարեղենի և խաղողի վերամշակման ծավալներն աճել են 3,5 անգամ, այդ թվում՝ պտուղ-բանջարեղենի պահածոների արտադրությունն աճել է ավելի քան 2,5 անգամ, չրերինը՝ 4 անգամ, բնական հյութերինը՝ 7 անգամ (վերամշակվում է պտուղ-բանջարեղենի և խաղողի ընդհանուր արտադրանքի ավելի քան 16 %-ը): Այժմ արտահանվում է նշված արտադրանքի 180 անվանում, որի տեսակարար կշիռն ընդհանուր արտահանվող ապրանքների մեջ կազմում է 73%: Եվ եթե առաջներում դրանց արտահանումն իրականացվում էր ՌԴ, Ղազախստան և էլի ԱՊՀ մի քանի երկրներ, ապա հիմա՝ ընդհանուր առմամբ աշխարհի ավելի քան 120 երկրներ:

Այս նվաճումները զգալի չափով պայմանավորված են նրանով, որ ջրային տնտեսությունում տեղի են ունեցել զգալի փոփոխություններ և կարևոր զարգացումներ: Անցած տարիների ընթացքում երկիրը հզորացրել է իր ոռոգման համակարգը և ներդրել ջրային ռեսուրսների ինտեգրացված կառավարման սկզբունքներ, ջրախնահ ժամանակակից տեխնոլոգիաներ, ջրի բաշխման և վերահսկման ավտոմատացված համակարգեր:

Ջրի արդյունավետ կառավարման նպատակով, 2003 թվականից գործի են դրվել 10 ջրավազային կառավարման համակարգեր, 1502 ջրօգտագործողների ասոցիացիաներում ընդգրկված են մոտ 70 հազար անդամ: Բյուջեի միջոցներից ամեն տարի նորոգվում է 5,0 հազար կիլոմետր ջրանցք, ջրօգտագործողների հաշվին՝ 100 հազար կիլոմետր ոռոգման ցանց, 10 հազար միավոր զանազան հիդրոկառույցներ: Վերջին տարիներին երկրում կառուցվել է 1,5 հազար կիլոմետր ջրանցք, 400-ից ավելի խոշոր հիդրոտեխնիկական կառույց, 200-ից ավելի պոմպակայան:

2007 թվականին երկրում ստեղծվել է «Ոռոգվող հողերի մելիորատիվ բարելավման հիմնադրամ», որն իրականացրել է 2008-2012թթ նույնանուն Պետական ծրագիրը՝ այդ և կոլեկտորա-դրենաժային համակարգի աշխատանքների վրա ծախսելով ավելի քան 500 միլիոն ԱՄՆ դոլար: Դրա շնորհիվ ավելի քան 1,2 մլն հա տարածքի վրա բարելավվել է հողերի վիճակը, կարգավորվել է գրունտային ջրերի խորությունը: Արդյունքում գրունտային ջրերի 2 մետրից ավելի բարձրություն ունեցող տարածքները կրճատվել են 117,6 հազար հեկտարով, աղակալված հողերի մակերեսը կրճատվել է 105 հազար հեկտարով: Արդեն գործում է համանման հաջորդ ծրագիրը՝ 2013-2017 թթ համար, որի իրականացմանը կտրամադրվի շուրջ 1,2 մլրդ ԱՄՆ դոլար. այս ծրագրի շրջանակներում տարվող աշխատանքները բերել են արդեն 1,7 մլն հա հողերի որակի բարելավման:

Հատուկ ուշադրություն է դարձվում ջրի ծախսը խնայող տեխնոլոգիաներին: Մի քանի տարի առաջ մեկնարկած 16,3 հազար հա կաթիլային ոռոգման տակ դնելու ծրագրի ավարտից հետո, ամեն տարի ավելանում է ևս 5,0 հազար հա: Ճկուն խողովակների և թաղանթային ոռոգման միջոցով ջրարբիացվում է ևս 18,7 հազար հա: 2013-2017 թթ ծրագրով նախատեսված երկարատև զեխչված վարկերի շնորհիվ գյուղացիական տնտեսությունները կաթիլային ոռոգում են անցկացրել 25 հազար հեկտարի վրա՝ 5 տարով ազատվելով բոլոր տեսակի հարկերի վճարումից:

Այս և այլ տեսակի ծրագրերում մեծ են արտերկրի ներդրումները. դրենաժային ծրագրերին մասնակցել է Համաշխարհային Բանկը՝ 74,5 մլն ԱՄՆ դոլար ներդրումով, պոմպակայանների, ջրանցքների, կառավարման և այլ բաղադրիչներում մասնակցել են Ֆրանսիան, Գերմանիան, Չինաստանը, արաբական մի շարք երկրներ, Իսլամական Բանկը, ընդհանուր առմամբ, 144,2 մլն ԱՄՆ դոլար ներդրում է կատարել, Ասիական Բանկը՝ 284,6 միլիոնի:

Կատարված աշխատանքների շնորհիվ հաջողվել է էապես նվազեցնել ջրի ծախսը՝ 1990 թվականի համեմատ նվազեցնելով այն տարեկան 62 միլիարդ խորանարդ մետրից մինչև 51 միլիարդի: Հեկտարի ծախսը կրճատվել է 18 հազար խորանարդ մետրից մինչև 10,5 հազար, այսինքն 42%-ով: Այս բոլորը վկայում է գյուղատնտեսության բնագավառում երկրի շոշափելի հաջողությունների մասին:

Վ Հ

Համայնքային

ՎՆԱՍԻ ՉԱՓԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ

Օգոստոսի 22-ի երեկոյան մոտ մեկ ժամ տեղացած կարկուտը, քամու ուղեկցությամբ, հողին է հավասարեցրել գյուղացիների բոլոր ակնկալիքները:

Կարկուտից ամենաշատը տուժել են ձմերուկի ցանքատարածությունները: Արմավիրի մարզի Շենիկ համայնքի բնակիչների խոսքով՝ մի քանի օրից սկսելու էին բերքահավաքը, սակայն կարկուտը 100 տոկոսով վնասել է բերքը: Կարկուտից մասամբ փրկվել են լոլիկի ցանքատարածությունները: Գյուղացիների կարծիքով, 10-ից 20 տոկոս կարելի է գործարանային բերք հավաքել: Շենիկում 1000 հեկտար մշակովի հողատարածք կա: Գյուղապետ Կորյուն Մինասյանի խոսքով, կարկուտից ամբողջովին վնասվել է մոտ 700 հեկտարը, վնասվել են ոչ միայն ցանքատարածություններն ու այգիները, այլև՝ բնակելի տներ, տանիքներ:

Շենիկում տեղակայված է 6 հակակարկտային կայան, որոնք գործում են, սակայն համայնքի ղեկավարի կարծիքով, գյուղում ևս 6 կայան է անհրաժեշտ, որպեսզի մեղմվի կարկուտի վտանգը:

Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանը, Շենիկում ծանոթացել է իրավիճակին, հանձնարարել կազմել հանձնաժողով՝ վնասի չափերը ճշտելու համար: Ըստ մարզպետի՝ ամբողջությամբ վնասվել են ձմերուկի ցանքատարածությունները, իսկ խաղողի և պտղատու այգիների դեպքում վնասի չափը կպարզվի ուսումնասիրությունից հետո: Գյուղացիական տնտեսությունների մոտ 80 տոկոսը վարկառուներ են, ովքեր գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման նպատակով, մինչև 25 մլն դրամ վարկ են ստացել: Ինչպիսին է լինելու վարկերի սպասարկման ճակատագիրը, գյուղացիները չգիտեն, նրանք ակնկալում են կառավարության աջակցությունը՝ վարկերը երկարաձգելու կամ սառեցնելու ուղղությամբ: Կարկուտից մասամբ տուժել են նաև Բաղրամյանի տարածաշրջանի Բագարան, Կողբավան, Բաղրամյան և Դալարիկ համայնքները:

www.armavir.mtaes.am

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ԿԱՂԱՄԲԻ ԱՌԱՎԵԼ ՏԱՐԱԾՎԱԾ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԸ, ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԴՐԱՆՑ ԴԵՄ

Սկիզբը՝ նախորդ համարում

Հիվանդությունների նկարագիրը

Սև ոտիկը սնկային հիվանդություն է, որն առաջացնում են մի քանի սնկեր: Տարածված է ամենուրեք, առավել հաճախ հանդիպում է սածիլանոցներում: Վնասում է կաղամբի արմատավզիկը, որը գորշանում է: Ցողունը բարակում է և կոտրվում, որի արդյունքում բույսը մահանում է:

Երբ տարիների ընթացքում սածիլանոցի հողը չի փոխվում՝ հողում հարուցիչների կուտակման համար ստեղծվում են նպաստավոր պայմաններ: Հիվանդության դրսևորմանը նպաստում է նաև հողի բարձր թթվայնությունը:

Օրգանական սննդանյութերով (հումուս և այլն) հարուստ հողերում հիվանդությունը թույլ է արտահայտվում: Վարակն արտահայտվում է արմատային համակարգի վրա, առաջացնելով տարբեր չափերի ուռուցքներ, որոնք ժամանակի ընթացքում փտում և քայքայվում են: Սածիլ հասակում բույսերը, վարակվելիս, մահանում են:

Կիլա հիվանդությամբ վարակվում է ինչպես գլուխ կապող, այնպես էլ ծաղկակաղամբի և սածիլները և հասակավոր բույսերը: Հիվանդությունն առավելապես դրսևորվում է թթվային, խոնավ և կավային հողերում:

Միջատասպան պատրաստուկների նկարագիրը

Լեպիդոցիդ: Աղիքային ազդեցության միջատասպան մանրէաբանական պատրաստուկ է, որն արտադրվում է չոր փոշու տեսքով: Փոշու յուրաքանչյուր գրամը պարունակում է ոչ պակաս 100 մլրդ կենսունակ սպոր և օժտված է 3000 ԱՄ/մգ կենսաբանական ակտիվությամբ:Ազդող հիմքը սպոր-բյուրեղային կոմպլեքսն է: Անվտանգ է մարդկանց, տաքարյուն կենդանիների և օգտակար էնտոմոֆաունայի համար:Սպասման ժամկետը վերջին մշակումից մինչև բերքահավաքի սկսվելը 5 օր է:

Բիտոքսիբացիլին (ԲՏԲ): Աղիքային ազդեցության միջատասպան մանրէաբանական պատրաստուկ է, որն արտադրվում է չոր փոշու ձևով: Փոշու յուրաքանչյուր գրամը պարունակում է ոչ պակաս 60 մլրդ կենսունակ սպոր և օժտված է 1500 ԱՄ/մգ կենսաբանական ակտիվությամբ:Ազդող հիմքը սպոր-բյուրեղային կոմպլեքսն է և բետա-էկզոտոքսինը: Պատրաստուկի 1 գրամ փոշում պարունակվում է 0,6-0,8% էկզոտոքսին:Անվտանգ է մարդկանց, տաքարյուն կենդանիների և օգտակար էնտոմոֆաունայի համար:Սպասման ժամկետը վերջին մշակումից մինչև բերքահավաքի սկսվելը 5 օր է:

Կալիպսո: Ներբուսային և կոնտակտ ազդեցության միջատասպան է: Ազդող հիմքը տիակլոպրիդն է: Թույլ թունավոր է մեղուների և անվտանգ շրջակա միջավայրի համար:Պատրաստուկը թողարկվում է 48% խտացված կախույթի (խկ) տեսքով:

Սպասման ժամկետը վերջին մշակումից մինչև բերքահավաքի սկսվելը 20 օր է:

Կոնֆիդոր: Ներբույսային և կանտակտ ազդեցության միջատասպան է: Ազդող հիմքը իմիդակլոպրիդն է:

Թույլ թունավոր է տաքարյուն կենդանիների և անվտանգ շրջակա միջավայրի համար:

Պատրաստուկը թողարկվում է 20% ջրային լուծվող խտության (ջլխ) տեսքով:

Սպասման ժամկետը վերջին մշակումից մինչև բերքահավաքի սկիզբը 20 օր է:

Ծծումբ կոլոիդ: Պատրաստուկը թողարկվում է 800 գ/կգ մածուկի (մ) կամ թրջվող փոշու (թփ) տեսքով:

Պայքարի միջոցառումները

Պայքարի գործում առաջնակարգ նշանակություն ունի մոլախոտերի համակարգված ոչնչացումը, քանի որ մոլախոտերի վրա սնվում են ինչպես թիթեռները (ճերմակաթիթեռ՝ նեկտարով), այնպես էլ վաղ գարնան սերնդի թրթուրները (կաղամբի ցեց և լվիճներ՝ տերևներով):

Խորը վարը նպաստում է վնասատուների ձմեռող հարսնյակների (կաղամբի ցեց, ճերմակաթիթեռ, բվիկ) և ձվերի (լվիճներ) մի զգալի մասի ոչնչացմանը:

Կաղամբի լվիճի քանակության նվազեցմանը նպաստում է կաղամբի ցանքատարածության շրջակայքում հովանոցավոր բույսերի (գազար, սամիթ) տեղաբաշխումը, քանի որ վերջիններս դեպի իրենց են գրավում լվիճների շատ էնտոմոֆագերի:

Վնասակար միջատների զանգվածային բազմացման շրջանում, երբ վնասատուների քանակությունները գտնվում են նրանց համապատասխան տնտեսական վնասակարության շեմերի կամ նրանցից բարձր սահմանագծում, անհրաժեշտություն է լեպիդոցիդի (1 կգ/հա) և ԲՏԲ-ի (1,5 կգ/հա) փոխեփոխ կիրառությունը կաղամբի ցեցի և ճերմակաթիթեռի դեմ և կալիպսոյով (0,3-0,4 լ/հա) և կոնֆիդորով (0,1 լ/հա) պայքարը՝ կաղամբի բվիկի և լվիճների դեմ:

Սև ոտիկ հիվանդությունը բացառելու համար անհրաժեշտ է ջերմոցներում կոլոիդ ծծումբը (30 կգ/հա) հող մտցնել ցանքից կամ սածիլումից 3 օր առաջ, իսկ կիլա հիվանդությունը կանխելու համար անհրաժեշտ է սածիլման ժամանակ հողը ջրել կոլոիդ ծծմբի 0,4%-ոց ջրային կախույթով:

Մասիս Սարգսյան
կենսաբանական գիտությունների դոկտոր

ԿՐԹԱԿԱՆ

ՆՈՐ ՀԱՄԱԼՐՈՒՄ

ՀԱԱՀ առաջին մասնաշենքի բակում գիտելիքի օրն առաջին կուրս ընդունված ուսանողների համար հանդիսավոր էր:

ՀԱԱՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Յու.

Մարմարյանի ողջույնի խոսքից հետո, առաջին կուրսեցիներին համալսարանի ուսանող դառնալու, ինչպես նաև գիտության և կրթության միջազգային օրվա կապակցությամբ շնորհավորել է համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Արշալույս Թարվերդյանը: Նա նշել է այն լայն հնարավորությունների մասին, որ բացվում են համալսարան ընդունվածների առջև. գերազանց կահավորված լսարաններ, ուսումնական, փորձնական տնտեսություններ և այլն: «Ձեզ, սիրելի առաջին կուրսեցիներ, մնում է միայն սովորել՝ ձեռք բերել գիտելիքների առավելագույնը, որը ձեզ թույլ կտա հետագա ձեր ճանապարհը հարթել թե' գիտության ասպարեզում, թե' արտադրությունում: Համալսարանի կոլեկտիվը պատրաստակամ է անելու ամեն ինչ, որպեսզի դուք ձեզ զգաք, ինչպես հարազատ օջախում»:

Առաջին կուրսեցիներին շնորհավորեցլ և հաջողություններ են մաղթել ՀՀ քաղծառայության նախագահ, ՀԱԱՀ շրջանավարտների միության նախագահ Մանվել Բաղալյանը, համալսարանի երկարամյա ու վաստակաշատ դասախոս Գ.Դավթյանը, «Ագրոբիզնես և շուկայաբանության» մասնագիտության առաջին կուրս ընդունված Դավիթ Մարկոսյանը:

Բարի երթ ձեզ, սիրելի առաջին կուրսեցիներ:

www.anau.am

ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Տավուշի մարզն ունի 7373 հա հացահատիկի ցանքատարածություններ, որից՝ 5684 հա աշնանացան ցորեն, 1305,5 հա աշնանացան գարի, 369 հա գարնանացան գարի և 15 հա հաճար: Տավուշի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Վաղարշակ Սուքոյանի տեղեկացմամբ, 7373 հա ցանքատարածություններից, այսօրվա դրությամբ հնձվել է շուրջ 7155 հեկտարը: Նախնական տվյալներով ստացում է 25-30 g հատիկի միջին բերք: Ընդհանուր առմամբ տարին բարենպաստ է գյուղատնտեսական աշխատանքների համար և նախորդ տարվա համեմատ, այս տարի ակնկալվում է բերքի ավելացում: Արդեն արտադրվել է 5000 տ կարտոֆիլ, 36000 տ խոտ, 135 տ ծղոտ, 900 տ բանջարեղեն, 80 տ բոստան, 3700 տ պտուղ, որից 700 տ դեղձ:

Թեև ՓՄՁԱԿ-ի ծրագրով, լիզինգով, «Նիվա» մակնիշի երկու հացահատիկահավաք կոմբայն է ձեռք բերվել, սակայն դեռևս կոմբայնների ձեռքբերման և մեքենատրակտորային հավաքակայանի թարմացման խնդիր կա մարզում:

***

Սարիգյուղի գյուղատնտեսական նշանակության հողատեսքերը թե՛ խորհրդային շրջանում, թե՛ նրանից առաջ անջրդի պայմաններում բարձր բերքատվություն են ապահովել ագրոկանոններով առաջնորդվելու դեպքում: Լավագույնն էր նաև ընթացիկ տարում: Մարզային իշխանություններից տրամադրված ցորենը ճիշտ ժամկետում՝ մինչև հոկտեմբերի 15-ը, պահպանելով ագրոկանոնները՝ վար, ցանքս, սնուցում, սրսկում մոլախոտերի դեմ հերբիցիդներով, հիմք հանդիսացավ բարձր բերքատվության համար: Այդ կազմակերպչական գործում ակտիվ դերակատարություն ունեցավ գյուղապետարանը՝ համայնքի ղեկավարի մասնակցությամբ՝ նաև համագործակցելով ԳԱՄԿ-ի խորհրդատուի հետ: Առանձին անհատ հողագործ ֆերմերներ՝ Վաղարշ Բայրամյանը, Միքայել և Արամ Եգանյանները, Սերոժ Էլլարյանն ապահովեցին 37-40 g բերքատվություն, որոնք օգտվում էին ԳԱՄԿ-ի խորհրդատվական ծառայություններից:

Տավուշի ԳԱՄԿ

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է...

ԼՈՌԱՄԻՐԳ

Լոռամիրգ բույս հանդիպում է Հյուսիսային Ամերիկայի և Եվրասիայի անտառների, ճահիճների, լճերի, տունդրայի տորֆամամռածածկ (սֆանգային) գրունտի վրա: Այն գոյատևում է իր առանցքային արմատի վրա ապրող սնկից ստացվող և մթնոլորտից կլանվող հանքանյութերի հաշվին:

Հապալասազգիների կամ հավամրգազգիների ընտանիքի պատկանող բույս է: Ունի բարակ, մամուռի վրա հազիվ նկատելի 15-75 սմ հասնող ընձյուղներ: Տերևները երկարավուն օվալ են, մուգ կանաչ, փայ-

լուն, տակից սպիտակ մոխրագույն՝ ծածկված մոմե խոնավապաշտպան շերտով: Ծաղիկները քառաթերթ (երբեմն 5-աթերթ) են, թերթիկները թեքված են դեպի ցողունը, գրեթե միահյուսված առէջքները ցցված են դեպի ներքև: Պտուղը վառ կարմիր գունդ է, որը հասունանում է աշնանը, քաղցրանում առաջին սառնամանիքների հետ և կարող է պահպանվել ամբողջ ձմեռ, որի ընթացքում շաքարների քանակը 4 տոկոսից հասնում է 6-ի:

Փոշոտվում է միջատների միջոցով, որոնք վերցնում են ծաղկափոշին, սակայն բույսի հիմնական արտահանող երկիր ԱՄՆ-ում ստացվում է շատ թանկարժեք և սակավ հանդիպող «լոռամրգի մեղր», որն ունի արտահայտիչ բուրմունք, յուրահատուկ գույն և այնքան քաղցր չէ, ինչպես մյուս ծաղիկների մեղրը: Այն օգտակար է դիսբակտերիոզի, ինֆեկցիոն հիվանդությունների դեպքում:

Վերջին տարիներին պարզվել է, որ լոռամրգի (ինչպես նաև՝ ազնվամորու, գետնամորու, փշոտ հաղարջենու) մեջ պարունակվող էլլագաթթուն, որը հակազդում է ուռուցքների աճին, չեզոքացնում կոնցեռոգեն նյութերը և պաշտպանում բջիջների ժառանգական նյութը (ԴՆԿ), բավական հեշտ է յուրացվում օրգանիզմի կողմից: Հատկապես կարևոր է, որ լոռամրգի հատապտուղը պարունակում է հակաօքսիդանտ ֆլավոններ: Հայտնի է նաև, որ C վիտամինի և ռուտինի (վիտամին P), բարենպաստ հարաբերակցության դեպքում կանխվում է սիրտ-անոթային համակարգի հիվանդությունների զարգացումը, կարգավորվում արյան ճնշումը: Ուրսոլաթթուն նպաստում է սրտասնույց անոթների լայնացմանը:

Պտուղները պարունակում է օրգանական թթուներ, շաքար, պեկտին, դաբաղող նյութեր, վիտամիններ C, B, K, PP, յոդ, կալիումի աղեր: Այս պտուղը մեծ նշանակություն ունի օրգանիզմում վիտամինների պակասը լրացնելիս: Միաժամանակ լոռամիրգը բարձրացնում է ստամոքսի և ենթաստամոքսային գեղձի հյութազատությունը, կարգավորում ախորժակը: Կիրառվում է ցածր թթվայնությամբ ուղեկցվող գաստրիտների, ենթաստամոքսային գեղձի բորբոքումների ժամանակ: Ստամոքսի խանգարումների դեպքում խորհուրդ է տրվում 2 ճաշի գդալ լոռամրգի վրա լցնել 2 բաժակ եռացրած ջուր և եռացնել 10 րոպե՝ թույլ կրակի վրա: Հետո սառեցնել, քամել ու խմել օրը 4 անգամ՝ կես բաժակից: Միակ հակացուցումը ստամոքսի բարձր թթվայնությունն է: Նման խնդիր ունեցողներին խորհուրդ է տրվում բուժվել այլ մեթոդներով, հակառակ դեպքում՝ գաստրիտի խորացումը կարող է նպաստել ստամոքսի խոցի առաջացմանը: Լոռամրգի հյութը թույլ է տալիս օրգանիզմից դուրս հանել տոքսինները: Բարելավում է երիկամների և լեղուղիների աշխատանքը: Թարմ լոռամիրգը կամ նրա հյութը կարգավորում է նաև արյան մեջ խոլեստերինի մակարդակը, իսկ հատապտղի հաճախակի օգտագործումը նպաստում է արյան անոթների ամրացմանն ու էլաստիկությանը:

Հատապտուղն օգտագործում են ինչպես թարմ կամ սառեցված վիճակում, այնպես էլ՝ թթու կամ չորացրած: Պատրաստում են հյութեր, կոմպոտներ, ժելե, ջեմ, դոնդող, լոռամրգի կոկտեյլներ և եփում կամ ավելացնում են աղցաններին, կարկանդակների և այլ ուտեստների մեջ: Լոռամիրգը օգտակար է նրանց, ովքեր սրտի հետ կապված խնդիրներ ունեն. այն արյան մեջ իջեցնում է այնքան վտանգավոր խոլեստերինի քանակը և պայքարում հիպերտոնիայի դեմ: Լոռամրգի հյութը մեղրի հետ խառնած վիճակում օգտագործվում է հազի ժամանակ, իսկ ովքեր հաճախ գանգատվում են գլխացավերից, խորհուրդ է տրվում 2 օրը 1 անգամ ընդունել հավասար քանակությամբ իրար խառնած մեղր ու մսաղացով անցկացրած լոռամիրգ: Լոռամրգի պատրաստուկները՝ օշարակը, մուրաբան, մարմելադը, հյութը, մորսը, կիսելը, ժելեն, արժեքավոր են՝ որպես դիետիկ սնունդ՝ C ավիտամինոզի եւ այլ հիվանդությունների դեպքում:

Լոռամրգի սովորականն օգտագործում են թթուների մեջ, մսի եւ ձկան պահածոյացման համար, որպես համեմունք: Արտադրական պայմաններում ստացվում է լոռամրգի խտացրած մզվածք, որի մեջ 1-2 տարի պահպանվում են բոլոր օգտակար նյութերը՝ առանց որևէ կոնսերվանտ օգտագործելու:

Միզամուղ և հակամանրէ հատկությունների շնորհիվ կիրառվում է երիկամների, միզապարկի եւ միզուղիների հիվանդությունների բուժման համար: Ցավոք, այս հրաշալի պտուղը սակավ է հանդիպում Հայաստանում թարմ վիճակում, սակայն, ինչպես գիտենք, նույնիսկ պահածոյացված վիճակում այն օգտակար է, կարևոր է՝ ենթարկված չլինի ջերմային մշակման:

ՎԻՏԱՄԻՆԻ ԱՆՍՊԱՌ ԱՂԲՅՈՒՐ

11-րդ դարում պղպեղն ունեցել է արծաթին հավասար արժեք և առևտրի մեջ շրջանառություն է կատարել որպես դրամ: Այժմ կան պղպեղի բազմաթիվ տեսակներ, որոնցից քաղցրն ունի իր հատուկ տեղը, քանի որ այն C վիտամինի մի անսպառ պահեստ է: Կարմիր պղպեղն իր մեջ ավելի շատ C վիտամին է պարունակում, քան այնպիսի մրգերը, ինչպիսիք են կիտրոնն ու նարինջը: Այդ առումով այն զիջում է միայն մասուրին և սև հաղարջին: Պղպեղի տարբեր տեսակների մեջ C վիտամինի քանակը տարբեր է լինում:

Պղպեղը բազմամյա, ոչ խոշոր թուփ է՝ կարմիր, նարնջագույն, դեղին գույներով

և արտաքին տեսքով միմյանցից տարբեր: Այն պատկանում է մորմազգիների ընտանիքին (պտուղները խոշոր եւ գունավոր են): Պղպեղի մեջ որքան շատ է կապսացինի պարունակությունը, այնքան կծու է պղպեղը: Կապսացինը հակաբորբոքային նյութ է, որը կանխում է քաղցկեղածին բջիջների առաջացումը, պայքարում է ստամոքսի և տասներկումատնյա աղիի խոց առաջացնող մանրէների դեմ, օգտակար է բրոնխիտի դեպքում: Սակայն կապսացինի չարաշահումը նաև կարող է գրգռել և աղեստամոքսային տրակտի խանգարումներ առաջացնել:

Կարմիր և դեղին պղպեղները, որոնց նաև անվանում են բուլղարական (չնայած որևէ կապ չկա այդ երկրի հետ), բավական տարածված են և վիտամիններով շատ հարուստ՝ B_1, B_2, PP և այլն: Հատկապես կանաչ պղպեղի մեջ վիտամին C-ի պարունակությունը ամենաշատն է: Գերադասելի է այն ուտել հում վիճակում: Դեղին, կարմիր, նարնջագույն պղպեղները հարուստ են բետտա-կարոտինով, որը նախապահպանում է սրտային հիվանդություններից և քաղցկեղի որոշ տեսակներից: Բացի այդ, կարմիր պղպեղը մյուսների համեմատ ավելի քաղցր է և զգալի քանակությամբ պրովիտամին A է պարունակում:

Սիրտ-անոթային հիվանդությունների դեպքում քաղցր պղպեղն անհրաժեշտ է պարտադիր ընդգրկել ամենօրյա սննդակարգում: Հենց այս բանջարեղենն է, որ պարունակում է այնպիսի նյութեր, որոնք ոչ միայն ամրացնում են մազանոթների պատերը, այլև բարձրացնում արյունատար անոթների առաձգականությունն ու ճկունությունը: Քաղցր պղպեղը հատկապես օգտակար և կարևոր է արյան շրջանառության խախտման դեպքում, հիպերտոնիայի, աթերոսկլերոզի նախնական փուլում, բացի այդ, օրգանիզմից հեռացնում է խարամներն ու թունավոր նյութերը:

Քաղցր պղպեղը հարուստ է վիտամիններով՝ ռուտինով (P), որը հեղուկացնում է արյունը և ամրացնում արյունատար անոթների պատերը. այդ իսկ պատճառով շատ օգտակար է երակի վարիկոզ լայնացման դեպքում: Այն անփոխարինելի բուժիչ միջոց է համարվում սակավարյունության, անքնության, հոգնածության, շաքարային դիաբետի, մաշկային և տեսողական խնդիրների դեպքում: Դանդաղեցնում է ծերացման ընթացքը: Օգտակար է թե՛ մեծերին, և թե՛ փոքրերին: Պղպեղը համեղ և օգտակար է բոլոր ձևերով՝ հում, տապակած, խորոված, շոգեխաշած:

Հատկապես կծու պղպեղը հակացուցումներ ունի. այն մեծ քանակությամբ խորհուրդ չի տրվում գաստրիտի, բարձր թթվայնության, քրոնիկ փորկապության, ենթաստամոքսային գեղձի բորբոքման (պանկրեատիտ), ստամոքսի խոցի և 12-մատնյա աղիի բորբոքման սրացման դեպքում և անհատական անընկալունակության ժամանակ:

Թարգմանությունը՝
Լիլիթ Գասպարյանի

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է
ԱԳՐՈ Լրատու
թերթի
1 տարվա գինը՝ 3960 դրամ
6 ամսվանը՝ 1980 դրամ
1 համարինը՝ 120 դրամ
2015 թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
«ԱԳՐՈԳԻՏՈՒԹՅՈՒՆ»
ամսագրի
1 տարվա գինը՝ 8100 դրամ
6 ամսվանը՝ 4050 դրամ
1 համարինը՝ 1350 դրամ
Բաժանորդագրությունը իրականացնում են՝
Գյուղատնտեսության աջակցության հանրապետական և մարզային կենտրոնները,
«Հայփոստ», «Հայմամուլ», «Պրես-Ափտաշե» կազմակերպությունները

ԱԳՐՈ Լրատու
AGRONEWS
Հասցեն՝ Երեւան, Մամիկոնյանց 39ա, հեռ.՝ 23-21-02, ֆաքս՝ 23-03-80
E-mail: asrc@cln.am կայք http://www.asrc.am

ՀԻՄՆԱԴԻՐ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն
«Գյուղատնտեսության աջակցության
հանրապետական կենտրոն» ՓԲԸ
Տնօրեն Ա. ՎԱՀԱՆՅԱՆ
Գլխավոր խմբագիր և
համարի պատասխանատու՝ Լ. ՇԱԽՆԱԶԱՐՅԱՆ

Տպաքանակ՝ 1100
2 տպագրական մամուլ
գրանցման թիվ՝ 01 Մ000226
դասիչ՝ 69105
պատվեր թիվ՝ 111
ստորագրված է տպագրության 24.08.2015 թ.
տպագրվում է ԳԱՀԿ տպարանում,
Երեւան, Մամիկոնյանց 39ա